ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.10.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/161

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ «ԲԱՖՏԱ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Հարությունյանի (պետական գրանցման վկայականի համար 03Ա1000940)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.09.2019թ. թիվ 26/26-1/15871-2019 գրությամբ «ԲԱՖՏԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 23.09.2019թ. թիվ 02/16.4/5625-2019 գրության հիման վրա, 26.09.2019թ. թիվ 26/26-1/15871-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «ԲԱՖՏԱ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Բաֆտա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Բաֆտա» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Բաֆտա» ՍՊԸ-ն (լիցենզիա՝ 16/226-01, տրված 15.10.2015թ.) իր գործունեության ընթացքում ոչ մի անգամ լայնամասշտաբ գնումների գործընթացին մասնակցություն չի ունեցել: ՀՀ Լոռու մարզի Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասում գտնվող թիվ 8-րդ դպրոցի հետ կապված նախագծա-նախահաշվային աշխատանքների գնումներին մասնակցելուց առաջ ծանոթացել է մրցույթի բոլոր պայմաններին: Նշված լիցենզիաներից Ընկերությունն ունի միայն «Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննության» տեսակը: Սակայն Ընկերությունը չունենալով մրցույթներին մասնակցելու բավարար փորձառություն մտածել է, որ եթե հայտարարվում է կապիտալ շինարարության մրցույթ նորակառույց օբյեկտների համար, ապա այս դեպքում սկզբից նախագծվում են ճարտարապետական, որից հետո կոնստրուկտիվ բաժինները՝ իրենց կոմունիկացիաներով և այլ մանրամասնություններով: Սակայն միայն առաջին մասն է համապատասխանում լիցենզիաներից Ընկերության ունեցած լիցենզիայի ոլորտին, իսկ մյուս բաժինները համապատասխանում են այն լրացուցիչ լիցենզիաների ցանկին, որոնք բերված են եղել մրցույթի պայմանների մեջ:

Ընկերությունը հայտնել է, որ այս նկատառումներով սխալմամբ, առանց որևէ հետին մտքի, առանց որևէ միտումնավորության պատկերացրել է, որ մրցույթը շահելու դեպքում կարող է հանդես գալ որպես գլխավոր կապալառու, կնքել պայմանագրեր այն կազմակերպությունների հետ, որոնք ունեն համապատասխան լիցենզիաներ և գլխավոր կապալառու-ենթակապալառու կարգավիճակով ավարտին հասցնել նախագծա-նախահաշվային աշխատանքներն իրենց ամբողջ ծավալով:

Ընկերության տնօրենը հայտնել է, որ պակաս փորձի պատճառով լավ չէր պատկերացրել իր կողմից թույլ տրվող սխալի բնույթն ու նրա վտանգավորության աստիճանը և երաշխավորել է, որ հետագայում նման սխալներ Ընկերության կողմից թույլ չեն տրվի:

Միաժամանակ հայտնել է, որ Ընկերությունը իր մասնակցությամբ չի խոչընդոտել ոչ մի ֆիզիկական կամ իրավաբանական անձի մասնակցությանը նշված մրցույթին: Ոչ մեկին, այդ թվում նաև ՀՀ կառավարությանը չի պատճառել ֆինանսական վնաս:

«ԲԱՖՏԱ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/161 ընթացակարգի շրջանակներում 03.10.2019թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել իր մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 23.09.2019թ. թիվ 02/16.4/5625-2019 գրությամբ հայտնել է, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2019 թվականի օգոստոսի 30-ին հայտարարված ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/27 ծածկագրով ՀՀ Լոռու մարզի «Ալավերդու Սայաթ-Նովայի անվան թիվ 8 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության նոր մասնաշենքերի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգին (հետայսու նաև՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «ԲԱՖՏԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը: ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ Մասնակցին ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Սահմանված ժամկետում նշված փաստաթղթերն ընդհանրապես չեն ներկայացվել: Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Մասնակցի հայտը մերժվել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/161 ընթացակարգի շրջանակներում 03.10.2019թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/161 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/161 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից կազմակերպվել է ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/27 ծածկագրով ՀՀ Լոռու մարզի «Ալավերդու Սայաթ-Նովայի անվան թիվ 8 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մասնաշենքերի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԲԱՖՏԱ» ՍՊԸ-ն:

1.Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.09.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ, որին Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

2. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից սահմանված ժամկետում չի շտկվել հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 26.09.2019թ. թիվ 26/26-1/15871-2019 գրությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 23.09.2019թ. թիվ 02/16.4/5625-2019 գրությունը և կից փաստաթղթերը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և

5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված լիցենզիայի պատճենը:

Կարգի նույն կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի

ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/27» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերով պահանջվել է հետևյալ լիցենզիան.

ԼԻՑԵՆԶԻԱ
Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակում (բացառությամբ կոնստրուկտորական մասի, ինչպես նաև շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)

ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐՆԵՐ *(նույն լիցենզիայի անբաժանելի մաս հանդիսացող համապատասխան ոլորտի աշխատանքներն իրականացնող պատասխանատու անձանց)*	
1.	բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր
2.	բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր
3.	բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր
4.	էներգետիկայի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգեր
5.	կապի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ հեռահաղորդակցության և ազդանշանային համակարգեր
6.	էներգետիկայի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրաէներգետիկական համակարգեր

Միևնույն ժամանակ, հրավերով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով սահմանվել է պայմանագրի կատարման համար համապատասխան որակավորում ունեցող առնվազն 13 աշխատակիցների պահանջ:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԲԱՖՏԱ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.09.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ.

1) Հավելված N 1-ի 3-րդ կետում նշված է, որ պայմանագրի կատարումն իրականացվելու է թվով 5 աշխատակիցների միջոցով՝ հրավերով պահանջվող նվազագույնը 13 աշխատակիցների փոխարեն,

2) Բացակայում են հրավերով պահանջվող Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակում (բացառությամբ կոնստրուկտորական մասի, ինչպես նաև շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) լիցենզիայի հետևյալ ներդիրները.

- բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր.

- բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր.

- բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր.

-էներգետիկայի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգեր.

-էներգետիկայի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգեր

- կապի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ հեռահաղորդակցության և ազդանշանային համակարգեր

-էներգետիկայի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրաէներգետիկական համակարգեր

Ընկերությանը Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.09.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից որպես արձանագրված անհամապատասխանությունների շտկում, սահմանված ժամկետում փաստաթղթեր չեն ներկայացվել:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը գտնում եմ, որ «ԲԱՖՏԱ» ՍՊԸ-ն թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված

պարտավորության խախտում և առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը, քանի որ Ընկերությունը սահմանված ժամկետում չի ներկայացրել հրավերով նախատեսված փաստաթղթերը, մասնավորապես՝ հրավերով պահանջվող լիցենզիայի համապատասխան ներդիրները, ինչպես նաև՝ թիվ 1 Հավելվածի՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմումի շտկված տարբերակը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.09.2019թ. թիվ 26/26-1/15871-2019 գրությամբ «ԲԱՖՏԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ԲԱՖՏԱ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**